ԿԱՐԾԻՔ

Կովալյովա Աննա Աշոտի «Пластика движений: особенности проявления и методика совершенствования в процессе физического воспитания» վերնագրով թեկնածուական ատենախոսության մասին, ներկայացված ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /Ֆիզիկական կուլտուրա և սպորտ/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գրախոսվող ատենախոսական աշխատանքը նվիրված է կարևոր և արդիական հիմնախնդրին՝ կոորդինացիոն ընդունակությունների, մասնավորապես շարժումների պլաստիկայի դրսևորումների ուսումնասիրմանը և նրա մեթոդիկայի մշակմանը ֆիզիկական դաստիարակության գործընթացում: Հարկ է նշել, որ համաձայն գրական աղբյուրների տվյալների, շարժումների պլաստիկայի նպատակային զարգացումը հնարավորություն է տալիս լուծելու մարդու ֆիզիկական, գեղագիտական, մտավոր կատարելագործման մի շարք խնդիրներ, իսկ մարզական բարձր արդյունքն անհնար է պատկերացնել առանց պլաստիկայի որոշակի մակարդակի ապահովմանը և շարժումների կուլտուրայի ձևավորմանը:

Վերոնշվածը ընդգծում է հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Ընդլայնվել են պատկերացումները շարժումների պլաստիկայի մասին՝ որպես մարդու կոորդինացիոն ընդունակությունների դրսևորումներից մեկը: Բացահայտվել են շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների միջև փոխադարձ կապեր, ինչը ցույց է տալիս նրանց փոխներգործությունը և փոխազդեցությունը: Մշակվել և ներդրվել է ֆիզիկական կուլտուրայի դասերին շարժումների պլաստիկայի կատարելագործման մեթոդիկան:

Հայցորդը մեծ աշխատանք է կատարել ուսումնասիրելով, վերլուծելով և ընդհանրացնելով ռուսաստանյան և արտասահմանյան փորձը շարժումների պլաստիկայի զարգացման հիմնահարցի վերաբերյալ: Դա թույլ տվեց հեղինակին ճշգրտել և որոշել հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, ձևակերպել գիտական վարկածը և հետազոտության խնդիրները:

Ա.Ա. Կովալյովայի ատենախոսական աշխատանքի ուսումնասիրումը և վերլուծությունը վկայում է այն մասին, որ հայցորդը գրագետ և բարձր մակարդակի վրա է որոշել հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան և վարկածը, ձևակերպել խնդիրները, ընտրել ու կիրառել է ժամանակակից և խնդիրներին համապատասխան հետազոտության մեթոդներ: Դա վկայում է Ա.Ա. Կովալյովայի գիտական լավ պատրաստվածության և պրոֆեսիոնալ վարպետության մասին:

Նշելով հետազոտության արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հարկավոր է ընդգծել ատենախոսական աշխատանքի արժեքավոր կողմերը:

1. Ուսումնասիրվել է շարժումների պլաստիկան՝ որպես մարդու կոորդինացիոն ընդունակությունների դրսևորումներից մեկը:
2. Որոշվել են բնակչության տարբեր տարիքային խմբերի՝ 7-8-րդ դասարանների աշակերտների, ուսանողների և առողջարարական ֆիզիկական կուլտուրայով զբաղվող հասուն և տարեց կանայք շարժումների պլաստիկայի դրսևորման առանձնահատկությունները:
3. Մշակվել և ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում ներդրվել է շարժումների ռիթմոպլաստիկայի գնահատման թեստ:
4. Մշակվել է 7-8-րդ դասարանների դպրոցականների շարժումների պլաստիկայի կատարելագործման մեթոդիկան ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ հայցորդը լուծել է կարևոր գիտական խնդիր՝ մշակված են շարժումների պլաստիկայի տեսագործնական հիմունքները և կատարելագործման մեթոդիկան;

Անկասկած հետազոտության արդյունքները ունեն գործնական կիրառելիություն, ինչի մասին փաստում են Ա.Ա. Կովալյովայի տպագրված աշխատանքները: Այն միանգամայն ընդգծում է հետազոտության գիտական նշանակությունը:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով Ա.Ա. Կովակյովայի ատենախոսական աշխատանքը հարկ է նշել որոշ բացթողումներ.

1. Աշխատանքը ավելի կշահեր, եթե հեղինակը առաջին հերթին ուսումնասիրեր կրտսեր դպրոցականների շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումները և մշակեր կատարելագործման մեթոդիկան:
2. Ցանկալի կլիներ հեղինակի կողմից ստացած տվյալները համեմատել այլ հեղինակների արդյունքների հետ:
3. Ցանկալի է, որ հայցորդը, ուսումնասիրելով ուսանողների շարժումների պլաստիկայի դրսևորումները, առանձնացներ նրանց մարզական մասնագիտությունը:
4. Աշխատանքում առկա են անճշտություններ և բացթողումներ «Բովանդակություն» (էջ 2) և «Հավելված» (էջ 111-124) բաժիններում:
   - «Բովանդակություն» բաժինը (էջ 2) սկսվում է գլուխ I, «Ներածությունը» բաց է մնացել:
   - «Բովանդակության» բաժնում (էջ 3) պետք է նշվի «Օգտագործված գրականության ցանկ», այլ ոչ թե «Գրականություն»:

     Հավելվածում ներկայացված են վարժությունների 5 ձև, որոնք առաջարկվում են կիրառել ընդհանուր զարգացնող վարժությունների կատարման, աթլետիկայի,

մարմնամարզության, մարզախաղերի անցկացման ժամանակ: Նպատակահարմար կլիներ այդ վարժությունները ներկայացնել և համարակալել առանձին հավելվածով:

5. Գրականության ցանկում ներկայացված 156 աղբյուրից միայն 3 հայ հեղինակ է նշված: Օգտագործված գրականությունից միայն 3.8%-ն են տպագրվել վերջին հինգ տարիների ընթացքում:

Սակայն նշված նկատառումները և որոշ վրիպումները չեն նվազեցնում կատարված հետազոտության գիտական արժեքը, տեսական և գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և նրանում լիովին արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Աշոտի Կովալյովայի «Пластика движений: особенности проявления и методика совершенствования в процессе физического воспитания» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հատուկ
մանկավարժության և հոգեբանության պրոֆեսոր,
մանկ.գիտ. դոկտոր,
սպորտային մարմնամարզության
ԽՍՀՄ սպորտի վարպետ Ռ.Ն. Ազարյան

Ռ,Ն. Ազարյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ
Գիտական քարտուղար՝ մ.գ.թ., դոցենտ Մ.Մ. Իսպիրյան

9 դեկտեմբերի 2024թ.